Գիտնականները պատրաստ են սկզբունքային բանավեճի

ՀՀ ԳԱԱ տարբեր գիտահետազոտական ինստիտուտների գիտնականներից ձեւավորված Հայաստանի գիտնականների հասարակական խորհրդի անդամներն այսօր պետք է վճռական հանդիպում ունենան ՀՀ ԳԱԱ նախագահության հետ: Գիտության ոլորտի բարեփոխման համար գիտնականներն ունեն իրենց առաջարկներն ու ծրագիրը:

Ներկայումս շրջանառության մեջ են բարեփոխման 3 ծրագրեր, որոնք առաջարկվել են ՄԱԿ-ի զարգացման ծրագրի Հայաստանյան գրասենյակի, Գիտությունների ազգային ակադեմիայի եւ Հայաստանի գիտնականների հասարակական խորհրդի կողմից: Վերջինիս անդամները համաձայնել են ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղար է. Ղազարյանի առաջարկին՝ վերջին երկու նախագծերը համատեղ քննարկման դնելու՝ վերաբերյալ: Այլ առաջարկներ առայժմ չկան:

Հենց այդ նպատակով էլ նրանք այսօր դռնփակ հանդիպման են գնալու ՀՀ ԳԱԱ նախագահության անդամների հետ՝ ընդունելի փոխհամաձայնություն ձեռք բերելու ակնկալիքով: Վիճահարույց՝ բոլոր խնդիրները նրանք պետք է լուծեն մինչեւ մարտ ամսվա վերջը եւ կառավարությանը ներկայացնեն մեկ ընդհանուր ծրագիր: Գիտության բարեփոխման ԳԱԱ նախագիծը բաղկացած է 15 կետից, որոնցից մի քանիսին, որ վերաբերում են գիտության կառավարման եւ նոր գիտական կառույցների ստեղծմանը, գիտնականները դեմ են:

Ի դեպ, ԳԱԱ նախագծի նախնական տարբերակում եղել է մի կետ, որն ինչ-որ պատճառով անհետացել է վերջնական տարբերակում: «Անհետացած» կետում ասված էր. «Գիտական կազմակերպություններին պատկանող անշարժ գույքն արգելվում է օտարել կամ սեփականաշնորհել»:

«Ես չեմ ուզում մտածել, որ այս կետը դիտավորյալ է հանված: Ուզում եմ հավատալ, որ դա բացթողում է»,- ասում է Հայաստանի գիտնականների հասարակական խորհրդի անդամ, ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, ֆիզմաթ գիտությունների թեկնածու Ազատ Սարգսյանը:

Միտումի տարրեր գիտնականներն այս քայլում, այնուամենայնիվ, տեսնում են:

«Եթե ինստիտուտներն «օպտիմալացվեն» եւ միացվեն, ինչպես որ պլանավորված է, եւ կազմակերպվեն ազգային 7-8 խոշոր գիտական կենտրոններ (իսկ ՀՀ ԳԱԱ համակարգում կան շուրջ 40 այդպիսի ինստիտուտներ), ապա դա նշանակում է, որ ազատվում են բավականին թվով շենքեր: Այս դեպքում հարց է՝ լա՞վ շենքերում կտեղավորվի այդ գիտական ներուժը, թե՞ ոչ, արդյո՞ք այդ շենքերից հենց ամենալավերը չեն սեփականաշնորհվի, եւ ո՞ւր կգնան վաճառքից գոյացած գումարները,- ասում է Հայաստանի գիտնականների հասարակական խորհրդի անդամ, ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, կենսաբանական գիտությունների դոկտոր Յուրի Թադեւոսյանը: - եւ արդյո՞ք ֆինանսական միջոցները կօգտագործվեն բացառապես գիտության կարիքների համար»:

ՄԱԿ-ի զարգացման ծրագրի Հայաստանյան գրասենյակի մշակած գիտության ոլորտի բարեփոխման նախագծի վերաբերյալ գիտնականների կարծիքը շատ հստակ է: Ներկայացված նախագծի վերջնական տարբերակն առայժմ մերժելի է, քանի որ նախ բարեփոխման առաջարկներն ու ուղիները չեն բխում հեղինակների՝ գիտության ոլորտի իրենց իսկ կատարած վերլուծությունից եւ ի զորու չեն ապահովելու Հայաստանի գիտության պահպանումն ու նպաստելու նրա զարգացմանը: Երկրորդ՝ ծրագիրն այս տեսքով կարող է վերջնականապես փոշիացնել Հայաստանի դեռեւս քիչ թե շատ պահպանված գիտական ներուժը՝ վերջնականապես քայքայելով երկրի տնտեսական զարգացումն ու անվտանգությունն ապահովող կարեւորագույն համակարգերից մեկը՝ ՀՀ ԳԱԱ գիտահետազոտական ինստիտուտների համակարգը:

Հայաստանի գիտնականների հասարակական խորհրդի մշակած բարեփոխման նախագծի հիմքում դրված է հետեւյալ վճռորոշ սկզբունքը. պահպանել երկրում առկա դեռեւս գործող ամբողջ գիտական ներուժը՝ սկսած յուրաքանչյուր առանձին գիտնականից, խմբից, մինչեւ ինստիտուտային համակարգ:

«Առայժմ պահպանել այն, ինչ մնացել է գիտությունից, եւ ապա նրան զարգանալու հնարավորություններ տալ»,- եզրափակում են գիտնականները:

Լ.Բ.